ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 598- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի N 83-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2026 թվականի փետրվարի 25-ի «405 կրթական դաշինք» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության դպրոցների ուսուցիչներին վերաբերող քաղաքականության ու բարեփոխումների գնահատման շուրջ հետազոտություն» ծրագրի մասին» N 83-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 8-րդ կետում «2026 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «2027 թվականի ապրիլի 30-ը» բառերով.

2) 9-րդ կետում «նոյեմբերի 30-ն» բառերը փոխարինել «2027 թվականի ապրիլի 30-ն» բառերով:

2. Սահմանել, որ «405 կրթական դաշինք» զարգացման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01351937) «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամի հետ (ՀՎՀՀ՝ 02619914) 2026 թվականի մարտի 10-ին կնքված՝ N 032026 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կրթական հետազոտության, տվյալների հավաքագրման ու զեկույցի ներկայացման ծառայությունների մատուցում՝ 14,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2026 թվականի փետրվարի 25-ի N 83-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

17.09.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ